3 *Եւ զգաւիթս ի հիմանց, մեծաւ յուսով։ Զաշխատակից եղբարքս եւ զհայր*
Յովաննես զարժանին ամենայն աւրհնու[թեան],
4 *զի յաւուր սոցա կրկին ազատեցան եկեղեցիքս մեր յամենայն հարկէ,*
յիշեցէք ի Տ̅ա̅։



Նկ. 30. Արձ. № 13։

Ծանոթություն.— *1. Երկրորդ տողում* երբեմն *բառի մեջ* Մ *և* Ն *գրերի փակագրի աջակողմյան վերին ելուստը մոռացմամբ չի փորագրված քարի վրա, բայց* զերբեմն *բառի իսկությունն անկասկած է։*

2. Նույն տողի զեկեղեցիքս *բառի երրորդ* Ե *գրից հետո քարը կոտրված է, բայց արձանագրությունից գրեր չեն պակասում։ Դա բացատրվում է նրանով, որ փորագրության ժամանակ այդ քարն արդեն կոտրված է եղել և արձանագրություն կազմողը գրերի փորագրությունը շարունակել է կոտրված տեղի աջ կողմում։*

3. Երկրորդ տողում ամիր *բառը փոքրատառով ենք գրել համարելով այդ ոչ թե անձնանվան մաս, այլ Քրդի պաշտոնը (ամիրայություն), ինչպես այդ միանգամայն պարզ է առաջին տողի վերջին երկու բառերից։*

Տարընթերցում.— *1. Երկրորդ տողում* Ջալ ուխտիս *բառը կարդացել է* ուստիս:

2. Ջալ. *Երկրորդ տողի* զերբեմն լեալ զեկեղեցիս աւգնութ̅ը̅ ամիր Քրդին և վարդապետի մեծի Գրիգորի և Ք̅ի̅ Ա̅յ̅ *բաց է թողել։ Նույնպես չի կարդացել 3-րդ տողի* զհայր Յով(հ)ան(ն)ես, զարժանին ամենայն աւրհնու[թեան] *և վերջին* յիշեցէք ի Ք̅ս̅ *բառերը։*

3. Հար. *Սկզբում իր կողմից ավելացրել է* «ի թուին հայոց»:

4. Վիմ. *արտագրել է նույնությամբ Հար-ից։*

13. Ժամատան հս մուտքի գլխին դրսից։ Այժմ մեծ ժամատան մեջ

(Լուս. № 30)

Հ ՈԽ Մ 1191

Հրատարակված է՝ Ջալ 18, Դրիմ 52—53, Հար 283, Վիմ 37

1 *Ի թագաւորութեանս վրաց Գաւրկէ, յամիրսպասալարութեան Զաքարէի*
եւ Իւանէի եղբաւր իւրո,